ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

1956 թվականի հուլիս 15 թվակիր հայրապետական սրբատառ կոնդակով վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդական փոխանորդ և Մայր Աթոռի երիտասարդ միաբան ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, նրա արդյունաշատ գործունեության համար, ի նշան հայրապետական գնահատանքի և սիրո։

ԾԱՂԿՅԱ ՓԻԼՈՆ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Վեհափառ Հայրապետի հուլիս 25 թվակիր սրբատառ կոնդակով ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհվեց Սուրաբայայի (Ինդոնեզիա) հայոց Ս. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶԱՅԱՆԻՆ՝ «Տիրոջ տան մեջ հավատարիմ և անբասիր սպասավորության» համար։

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետը մայիս 6 թվակիր սրբատառ կոնդակով Ատրպատականի հայոց առաջնորդական տեղապահ արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանի միջնորդությամբ, եկեղեցական երկարամյա մաքուր և արդյունավետ գործունեության համար, ի նշան հայրապետական գնահատանքի, քահանայական լանջախաչ կրելու իրավունք շնորհվեց՝

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ (Ատրպատականի Շահփուր գավառ, Իրան)։

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԼԵՎՈՆ ՔԱՀԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ (Ատրպատականի Ռեզայե քաղաք, Իրան)։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿ

1957 թվականի մայիսի 24-ին և 25-ին հայրապետական օրհնության կոնդակի են արժանացել, Ատրպատականի հայոց առաջնորդական տեղապահ արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանի միջնորդությամբ, Ատրպատականի հայոց թեմական խորհրդին արած իրենց նվիրատվությունների համար՝

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՄԻՔԱՅԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ,
ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՄԵՍՐՈՊ ԱՎԱԳՅԱՆ,
ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ՄԵԼԻՔ-ԱՍԼԱՆՅԱՆ։